Հուսիկ Արա

Դու աշխարհի լույսն ես

Թե ո՞ւմ է նման երկնքի արքայությունը,
ես չգիտեմ,
բայց երկրի վրա իմ գանձը դու ես:
Ու տեսնելով քեզ՝
հավաքեցի իմ ընկերներին
և սիրո մասին խոսեցի այսպես.

Երանի հոգով ազատիս, որովհետև քեզնով պիտի լցվեմ.
երանի կորցրածիս, որովհետև քեզ պիտի գտնեմ.
երանի է համբերողիս, որովհետև քեզ պիտի ժառանգեմ.
երանի է ինձ, որ քաղցն ու ծարավն ունեմ քո մարմնի,
որովհետև պիտի հագենամ:

Այգեպանդ լինեմ, մարմնիդ պահապանը միակ.
առավոտյան գամ ու քեզ վայելեմ մինչև երեկո,
կեսօրին գամ ու նույնչափ հագենամ քեզնով,
գամ երեկոյան և ամբողջ օրվա հաճույքը ինձ տաս:
Ամառ լինեմ ու այգիդ.
չզրկես, ինձ վճարես արժանը և ասես՝
մի՛ նախանձեք, որ առատաձեռն եմ:

Երանի՝ որ տալիս եմ, որովհետև քեզ պիտի ստանամ.
երանի է, որ սրտով մաքուր եմ,

որովհետև քեզ պիտի տեսնեմ ու փառավորվեմ.
երանի՝ որ փնտրում եմ սեր,
որովհետև իմն է քո սիրտն ամբողջովին.
երանի է սիրողիս, որովհետև քո սերը պիտի կոչվեմ:

Ճշմարիտ եմ ասում,
հոգնած և բեռնավորված եկա քեզ մոտ,
կույր էի ու տեսնում եմ,
խուլ էի ու լսում եմ,
համր էի ու խոսում եմ:

Դու երկրի աղն ես, եթե պակասես, կանհամանամ ես.
դու աշխարհի լույսն ես, իմ քաղաքը,
որ տարածվել ես թևերիս վրա և չես կարող իմը չլինել:
Երանի է, որ քեզ ունենալուս համար
ինձ պիտի նախանձեն.
ցնծում եմ և ուրախանում,
որովհետև քո շնորհիվ բոլորի մեջ ամենալավն եմ: